

## «Ապագա հայկականը» հանրային նախաձեռնության Արցախյան ֆորումի քննարկումների համառոտագիրն ըստ ծրագրային ուղղությունների

Արցախյան ֆորումի 5-6 ժամյա քննարկումների ընթացքում պրոֆեսիոնալ գրառողների կողմից արձանագրվել է արցախցիների՝ մոտ 620 քաղաքականության դիտարկումներ: Քննարկման դրված նյութի և դիտարկումների համառոտ ամփոփում կոնկրետ ծրագրային ուղղագծի տեսքով ունի հետևյալ պատկերը (դասավորությունը՝ նվազման կարգով ըստ քվեարկությունների միջին կշռված բալերի):

### «Մնում ենք Արցախում»

4.6 բալ (5-ից)

- *Ես իմ միակ տղային ասել եմ եթե մենք այսօր այստեղ ենք, դա նշանակում է, որ մեր պապերը, ապուպապերն այստեղ են մնացել, ուրեմն մենք պարտավոր ենք շարունակել նույնը: Առաջնահերթությունը Արցախում բնակվողներին երկրում պահելն է:*
- *Պատերազմից հետո տնտեսության կառուցվածքը փոխվել է: Պետք է ուսումնասիրվի, թե ինչ ուղղությամբ է ճիշտ զարգանալ:*
- *Պետք է ճիշտ դաստիարակվեն էրեխեքը, պիտի սերմանվի, որ յուրաքանչյուր ընտանիք, որը լքում է իր գյուղը կամ տունը, իր այդ որոշմամբ հանձնում է Արցախի՝ իրեն վստահված կտորը: Արցախը են եմ, պետությունը են եմ, հայրենիքը են եմ:*

«Մնում ենք Արցախում» շարժման գաղափարն ամենաշատ աջակցությունը ստացավ մասնակիցների կողմից: Այս գաղափարի հիմնական ուղղություններն են. (1) առկա բնակչության արժանապատիվ կեցություն, (2) բնակարան և աշխատանք յուրաքանչյուրի համար, (3) հստակ սոցիալական երաշխիքներ բազմազավակ ընտանիքներին, (4) կրթական, քարոզչական հզոր համակարգ: Արցախցիներն ընդգծում են, որ ծրագիրը կարևորություն պիտի տա հոգևոր, գաղափարական կոմպոնենտին՝ չմոռանալով իհարկե կյանքի պայմանների բարելավման և տարբեր խթանների գործարկման ուղղությամբ: Իհարկե, համալիր այս ծրագրի իրականացման հարցում էական է պետական քաղաքականություն դերը, սակայն հատկապես (2) «բնակարան և աշխատանք յուրաքանչյուրի համար» և (4) «կրթական, քարոզչական հզոր համակարգ» ուղղություններով վճռորոշ կարող են լինել աշխարհի հայերի համադրված ոչ-մեծ ծրագրերը:

- Հայաստանում անցկացվող խոշոր միջոցառումների զգալի մասը հնարավոր է տեղափոխել և անցկացնել Արցախում: Տեսե՞ք այսօրվա այս քննարկումը ինչքան բան է արդեն փոխել մեր կյանքում:
- Շատ լավ կլիներ, որ Հայաստանում գործող զբոսաշրջային ընկերություններն արցախում մասնագետներ պատրաստեին և հենց նրանցով էլ ակտիվ աշխատեին Արցախը կարևոր տուրիստական ուղղություն դարձնելու ուղղությամբ:
- Եթե մարդիկ գալու են Էստեղ նկարվեն, ասեն՝ ես արցախցուն մենակ չեմ թողնում. սա միայն PR կլինի:
- Շատ լավն է Թումոյի օրինակը, երբ ոչ միայն Երևանից, այլև արտասահմանից մասնագետներ գալիս են Արցախ վարպետության դասերի և մի ամիս մնում այստեղ: Սա արցախցուն մենակ չթողնելու փայլուն օրինակներից է:

Այս նախաձեռնության հիմքում այն հավատամքն է, որ հայաստանցիների և աշխարհասփյուռ հայերի մշտական ներկայությունը Արցախի գյուղերի ու քաղաքների փողոցներում տնտեսականից բացի կարևոր նշանակություն ունի նաև միայնության կամ լքված լինելու զգացման դեմն առնելու հարցում: «Արցախցու համար կարևոր է զգալ, որ մենակ չի: Սա նշանակում է, որ մարդիկ ֆիզիկապես գան ներկա լինեն այստեղ», - նշում էր քննարկման մասնակիցներից մեկը: Զբոսաշրջային ընկերությունների հետ աշխատանքը, ուշագրավ փաթեթների ձևավորումը, հայաստանյան ԲՈՒՀ-երի և ավագ դպրոցների համար պարբերական կրթամշակութային ուղևորությունների նախատեսումն ու համալիր քարոզչությունը շատ բան կարող են փոխել Արցախի զբոսաշրջության ոլորտում: Հայաստանի առաջատար զբոսաշրջային ընկերությունների հետ թիրախավորված աշխատանքը կարող է նկատելի արդյունք տալ Արցախի գյուղերի ու քաղաքների ակտիվության և, ընդհանրապես, տնտեսական զարգացման խթանման, աշխատատեղերի ստեղծման հարցում:

## Մարդկանց տրամադրվածությունների վրա ազդող համակարգի ստեղծում

- Մեզ անհրաժեշտ է բոլոր իրավիճակների համար ինքնակազմակերպման մեխանիզմներ մշակել: Նույնիսկ կազմակերպություններն ունեն տարբեր իրավիճակներին արձագանքելու ռազմավարություն, նմանատիպ փաստաթուղթ պետք է մշակվի նաև երկրի համար:
- Հասարակության մեջ համապատասխան մտածողություն ձևավորելու համար պետք է ճիշտ հոգեբանական աշխատանք տարվի: Պետք է նախ հասարակությունը բուժվի, մթնոլորտը առողջացվի:
- Մարդուն չես կարող ստիպել շատ երեխա ունենալ, պետք է հետևողական այնքան աշխատել, այնպիսի մթնոլորտ ձևավորել, որ մարդիկ իրենք ցանկանան շատ երեխաներ ունենալ: Քարոզչությունը հասարակական, մեդիա դաշտում շատ էական է: Ամեն ինչի հիմքերը էդտեղից է սկսվում դրվել:

Ժողովրդագրական պատկերն անվտանգային այս կամ այն միջավայրերում լրջորեն չվտանգելու համար միջոտ պետք է պատրաստվել, համապատասխան կառուցվածքներ ստեղծել: Դա աշխատանք է, որ պիտի կատարենք առանց դադարի: Ավելի բարդ սցենարների պատրաստվելիս ակնհայտորեն պետք կլինի մարդկանց զգացականության, արտագաղթի հակվածության, քաղաքացիների վարքագծի վրա ազդելու գործիքակազմի մշակում, **ռիսկերի կառավարման ինստիտուցիոնալացված ընտանիքի կամ արտագաղթի խնդիրներով մարդկանց տրամադրվածությունների վրա ազդող համակարգի ստեղծում**, ինչը պետք է անել առաջին հերթին իհարկե պետական մակարդակով: Սակայն, անշուշտ, արցախի հասարակական կառույցների, մամուլի, մշակութային գործիչների հետ տարբեր համահայկական ուժերով հասցեական ծրագրերը կարող են էական ազդեցություն ունենալ, ավելին՝ արցախյան ֆորումի մասնակիցներից մեկն անգամ առաջարկում էր ստեղծել հատուկ ժողովրդագրական ռիսկերի կառավարման կենտրոն ստեղծել՝ վերլուծական, քարոզչական և միկրոծրագրեր իրականացնելու կարողություններով:

## «Արցախ-վերադարձ»

4.0 բալ (5-ից)

- *Չադրության տեղահանվածները հոգեբանական սթրես են ապրում զուտ այն փաստից, որ մշակելու հողամաս, տնամերձ չունեն: Նույնիսկ փոքր տնամերձ հողամաս տրամադրելը լավ խթան կարող է դառնալ նրանց Արցախ վերադարձնելու համար:*
- *Գյուղատնտեսության մեջ հեռանկարային ուղղություններ կան՝ ջերմոցներ, այլընտրանքային միս, օրինակ՝ ճագարինը: Այս ուղղությունները պիտի զարգացնենք, քանի որ հացահատիկը արդեն դժվար է մշակել:*
- *Արցախ վերադառնալու համար թիվ մեկ կռվանը անվտանգության հարցը լուծելն է:*

44-օրյա պատերազմից հետո Արցախի 242 համայնքներից մնացել է 141-ը, իսկ տնազրկված քաղաքացիների մի մասը հեռացել է Արցախից: Կարծիք կա, որ նրանց վերադարձը խթանելը ժողովրդագրական քաղաքականության առաջնային խնդիրը պետք է լինի: Այդ տեսանկյունից առաջին հերթին Շուշիի, Չադրության բնակչության և պատերազմի ժամանակ հեռացած այլ բնակավայրերի բնակիչների վերադարձին ուղղված **«Արցախ-վերադարձ»** կամ **«Գնում ենք տուն»** համալիր ծրագրի մշակումն ու իրականացումը կարևոր արդյունք կարող են տալ: Պատկերացումն այն է, որ այսօրինակ նախաձեռնությունը պիտի կյանքի կոչվի Արցախի, Չայաստանի և ողջ հայության միասնական ջանքերով՝ ենթադրելով ոչ միայն քարոզչական, «ոգեղեն» գործիքներ, այլև Արցախում կենսապահովման նոր՝ ռեալ պայմանների ստեղծում: Արցախը լքածների հաշվառումը, կարիքների գնահատումը, նրանց Արցախ վերադարձի համար պայմանների մշակումը, ընտանիք առ ընտանիք բանակցումն ու համապատասխան հանրային մթնոլորտի ձևավորումը իրականանալի ծրագիր է, որն արագ արդյունքներ կարող է ապահովել:

- Արցախն ունի ներկայանալու շատ բրենդներ, բայց այդ ամենը պետք է կազմակերպվի և ներկայացվի աշխարհում թե՛ պետական մակարդակով, թե՛ Սփյուռքի ջանքերով:
- Նախ պետք է հասկանանք թե ի՞նչ ենք ուզում ներկայացնենք, նոր մտածենք բրենդինգի, ներկայացման ձևի մասին:
- Օրինակ՝ Կորեան ու Թուրքիան, տարածում են նաև իրենց պատմությունը պոպուլյար սերիալների միջոցով՝ ներկայացնելով այն այնպես, ինչպես իրեն է շահեկան: Պետք է մենք էլ կարողանանք ցուցադրենք Արցախը, պայքարող տեսակի միտքը, ազատ մարդու տեսակը:

Պետք է մտածել Արցախի, արցախյան ինքնության տեսանելիության բարձրացման մասին Հայաստանում և աշխարհում: Արցախի բրենդինգի առաջխաղացումը, «Արցախ» անվան շարունակական տարածումը մեծ դեր կարող է ունենալ աշխարհի ուշադրության կենտրոնից Արցախի և արցախահայության չիեռանալու հարցում: Սա նախ և առաջ ավելացնում է անվտանգության աստիճանը, բարձրացնում մարդկանց հպարտությունը, ամուր կապում սեփական տանն ու հայրենիքին: Ընդհանրապես մենք թերևս պիտի զարգացնենք «քաղաքացիական ազգայնականության կոնցեպտը», երբ արցախցի լինելու, Արցախում ապրելու հպարտությունը լավ իմաստով վեր է ցանկացած այլընտրանքից: Սա բոլոր հնարավոր դժվարություններից չընկրկելու փորձված ուղի է: Զանքերի համադրման դեպքում սա ամեն օր արդյունք տվող ծրագիր կարող է լինել:

## «Համայնք-կոմունաների» ձևավորում

- Համայնքային զարգացման ծրագրերի քանակի ավելացում պետք է լինի: Եթե համայնքները մնան ու ուժեղանան, մնացածն էլ կմնան ու կուժեղանան:
- Համայնքային մակարդակում բազմաթիվ խնդիրներ կարող են լուծվել, ինքնակազմակերպման ավելի բարձր մակարդակով ավելի մեծ մարտահրավերների կարող է պատրաստ լինի Արցախի հայությունը:
- Համայնք-կոմունաներով մենք ավելի ենք մեկուսացնում համայնքները միմյանցից:

Այսպես կոչված «Համայնք-կոմունաների» ձևավորումն անվտանգային բարդ միջավայրերում ճկունություն կարող է հաղորդել Արցախին, երբ առանձին համայնքները, համապատասխան պայմաններում, դառնում են ինքնապահպանվող ու ինքնազարգացող՝ ինքնուրույն լուծելով նաև հայապահպանության, բնակչության աճի և սոցիալական արդարության խնդիրները: Խոսքն ավելի ինքնաբավ համայնքներ դառնալու մասին է, որտեղ մարդիկ ստեղծում են միասին, կիսում են բարիքները իրար մեջ, պատրաստ են իրենք իրենց, իրենց լեզուն, արժեքները, կրոնն ինքնուրույն պաշտպանել, ինքնուրույն զարգանալ՝ անկախ այն հանգամանքից՝ պետական օժանդակություն կամ այլ օժանդակություններ կլինեն, թե ոչ: Արցախում համայնքների ուժեղացման համահայկական ծրագրի իրականացումը նոր հնարավորություններ կարող է ստեղծել տարբեր տիպի մարտահրավերների դիմակայելու հարցում Արցախի ներուժի ավելացման համար:

- *հնձ դուր եկավ քավորության գաղափարը, և՛ էմոցիոնալ տեսանկյունից, և՛ նրանց մեջ մրցակցություն մցնելու առումով, դրանով կշահեն համայնքները՝ կտրուկ կզարգանան:*
- *Այսօր Վանք գյուղը ամենապայծառ գյուղերից է Լևոն Հայրապետյանի շնորհիվ: Ինքը կառուցել է, բայց էդ գործը շարունակողներ են պետք, այսինքն՝ ինստիտուցիոնալ մոտեցման կիրառում:*
- *Քավորի գաղափարը էլի կարճաժամկետ է. հնարավորությունները ներդնելու դեպքում պետք է նաև սովորեցնել դրանց պահպանման ձևերը:*

Փորձագետների մոտ առաջարկ կար Արցախի յուրաքանչյուր համայնք «ամրակցել» Սփյուռքի օջախներից կամ Հայաստանի համայնքներից որևէ մեկի հետ, կամ էլ որևէ մեծահարուստ հայ բարերի հովանու ներքո բերել: Սա թույլ կտա համայնքներին առանձին խողովակով միշտ «թարմ օդ» ստանալ՝ ձեռք բերելով նաև որոշակի ամրություն ժողովրդագրական և զարգացման խնդիրներ լուծելու համար: **«Ամեն համայնք պիտի «քավոր» ունենա**, որ կապվի աշխարհին ու մարդիկ շատանան», - այսպես էին նկարագրում իրենց առաջարկը փորձագետները՝ կանխատեսելով «քավորների» մրցում և համայնքների մրցակցային զարգացում: Ավելին՝ եթե որևէ համայնքի հովանավորն, ասենք, Դոնի Ռոստովի կամ Սալոնիկի հայությունն է, կամ որևէ հայտնի բարերար, ապա նրանց ներկայացուցիչ մեկ կամ մի քանի ընտանիք պարտադիր պիտի տեղափոխվի Արցախի տվյալ համայնքում ապրելու՝ դառնալով կամուրջ այդ համագործակցության համար: Հիշեցնենք, որ օրինակ Թաթուլ Կրպեյանը 1990թ. սեպտեմբերից գնացել էր պատմության ուսուցիչ աշխատելու Գետաշենի դպրոցում: Այս նախաձեռնությունն ամենաքննարկվողն էր Արցախի ֆորումում, սակայն արցախցիները մինչև վերջ չկարողացան տեսնել այս ծրագրի իրականանալի լինելը: